Հավելված 2
2025 թվականի հունվարի 23-ին կնքված
կնքված N <<ԴՏՊ-1141-11018/25 >> ՄԶՎ17 պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N 1

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» |
| **Դրամաշնորհի N** | N <<ԴՏՊ-1141-11018/25>> ՄԶՎ17 |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ ԱՍՀՆ |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | Մանկական զարգացման հիմնադրամ |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | Հունվար-դեկտեմբեր 2025թվական |
| **Հաշվետու ժամանակահատված** | Հունվար – մարտ 2025թ. |
| **Ներկայացման օր** | 09.04.2025թ. |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Ծրագրի համակարգող՝ Անուշ Զեյնալյան |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով ⁏ պայմանագրի 1 ⁏ թիվ 7 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածում Մանկական զարգացման հիմնադրամի մասնագիտական թիմը ակտիվորեն իրականացրել է իրազեկման աշխատանքներ՝ համագործակցելով շահագրգիռ կողմերի՝ դպրոցների, մանկապարտեզների, ՏԻՄ-ի, ինչպես նաև երեխաների հետ առնչվող այլ կառույցների հետ: Կազմակերպվել են պարբերական հանդիպումներ Արենի խոշորացված համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի հետ՝ ներկայացնելով ծրագրերը և հետագա անելիքները:
Տեղի է ունեցել Միասնական սոցիալական ծառայության Եղեգնաձորի տարածաշրջանի համակարգող խորհրդի 3 նիստ, որի անդամ է ցերեկային կենտրոնի սոցիալական աշխատողը:

Իրականացվել է ԿԴԻԳ, այդ թվում՝ խնամքի հաստատություններում գտնվող, ռիսկի խմբում գտնվող, հաշմանդամություն ունեցող երեխաների հայտնաբերման և ցերեկային կենտրոն ուղղորդման աշխատանքներ:
Մասնագիտական թիմը օգտվել է ինչպես համայնքում առկա ԿԴԻԳ ընտանիքների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունից, այնպես էլ իրականացրել է նոր տեղեկատվության հավաքագրում:
Ծրագրի մասնագիտական թիմը Վայոց ձորի Միասնական սոցիալական ծառայության Եղեգնաձորի տարածքային կենտրոնի հետ համատեղ իրականացրել է համայնքներում ԿԴԻԳ, ինչպես նաև հաստատություններում գտնվող երեխաների հայտնաբերմանն ուղղված՝ տվյալների ուսումնասիրություն և վերլուծություն:
Ուսումնական հաստատությունների մանկավարժական անձնակազմերի հետ համատեղ քննարկման արդյունքում 8 երեխա ուղղորդվել է ցերեկային կենտրոն ծառայություններ ստանալու նպատակով:
Վայոց ձորի մարզի շուրջօրյա հաստատություններում գտնվող երեխաները, որոնց առողջական վիճակը գնահատվում է ծանր, ուսումնասիրության ընթացքում կապ է հաստատվել հաստատությունների տնօրենների հետ՝ քննարկելով երեխաների առողջական վիճակը և ընտանիքների հետ վերամիավորման հնարավորությունները: Ցերեկային կենտրոնի սոցիալական աշխատողը կապ է հաստատել նաև երեխաների ծնողների հետ:

Իրականացվել է սոցիալական կարիքների գնահատմանն ուղղված տնային այցեր, նոր հայտնաբերված շահառուների տնային այցելությունները իրականացվել են Միասնական սոցիալական ծառայության Եղեգնաձորի տարածքային կենտրոնի աշխատակիցների հետ համատեղ: Եռամսյակի ընթացքում ծրագրում ներառված է եղել 71 երեխա՝ 55 ընտանիքներից:Ի րականացվել են թվով 55 տնային այցելություններ:
Ծառայությունները ներառում են ինչպես առաջնային գնահատում և խորհրդատվություն, այնպես էլ երեխաների ներգրավում անհատական և խմբային պարապմունքներին՝ ելնելով տարիքային և զարգացման առանձնահատկություններից:

Բազմամասնագիտական թիմը իրականացրել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող բոլոր շահառու երեխաների կարիքների գնահատում: ՄԶՀ-ի մասնագիտական թիմը կիրառել է ԿԴԻԳ երեխաների և նրանց ընտանիքների կարիքների համալիր գնահատման գործիքակազմ:
Տրամադրել է խորհրդատվություն՝ հիմնված արդեն առկա մասնագիտական /առողջապահական, կրթական և սոցիալական/ եզրակցությունների վրա:

Կարիքների համալիր գնահատման արդյունքում կազմվել են անհատական սոցիալական ծրագրեր/միջամտության պլան յուրաքանչյուր երեխայի/ընտանիքի համար՝ սահմանելով հիմնախնդիրներն ըստ առաջնահերթությունների, հիմնախնդիրների լուծմանն ուղղված նպատակները և դրանց հասնելու կոնկրետ գործողություններն: Կազմվել են թվով 71 անհատական սոցիալական ծրագրեր:

Ծառայությունները տրամադրվել են ըստ երեխաների անհատական կարիքներին՝ ընգրկելով արտ-թերապիա, ինքնասպասարկման հմտությունների ուսուցում, սոցիալական աշխատանք ընտանիքի հետ, կրթական աջակցություն՝ երեխաների կրթության մակարդակի բարձրացման նպատակով:
Ցերեկային կենտրոնը շահառուներին մատուցում է, ինչպես անհատական, այնպես էլ խմբային պարապմունքներ՝ հետևյալ բովանդակությամբ.
•հոգեբանի, հատուկ մանկավարժի, լոգոպեդի անհատական և խմբային ծառայություններ
•արտ-թերապիա
•ինքնասպասարկման հմտությունների ուսուցանում
•սոցիալական աշխատանք երեխայի և նրա ընտանիքի հետ
•կրթության առաջընթացի ապահովում՝ երեխաներ, որոնք դուրս են մնացել կրթությունից, կստանան մանկավարժի ծառայութուն՝ ապահովելու երեխաների լիարժեք ներգրավումը կրթության գործընթացում
•անձնական ուղեկցողի ծառայություն
•առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ խորհրդատեղեկատվական և ուղղորդման ծառայություններ:

Մասնագիտական բոլոր ծառայությունները գրանցվում են համապատասխան փաստաթղթերում:

Փաստացի ցերեկային կենտրոնում գտնվելու ժամանակահատվածում երեխաներին մատուցվում է սնունդ:
Կենտրոնում գործում է անձնական ուղեկցողի ծառայություն, հաշվետու ժամանակահատվածում շահառուների ցանկում չկա երեխա, ով ունի անձնական ուղեկցողի ծառայության կարիք: Կարիքի դեպքում ՄԶՀ-ն կտրամադրի անձնական ուղեկցողի ծառայություն երեխային տանը:

Սոցիալական աշխատողը աշխատանքներ է իրականացրել շահառու երեխաների ծնողների հետ՝ ապահովելու երեխայի զարգացման և հասարակության մեջ լիարժեք ներառման գործընթացը: Իրականացվել են դասընթացներ՝ ծնողավարման հմտությունների վերաբերյալ և անցկացվել անհատական խորհրդատվություններ: Շահառու երեխաների ծնողների հետ կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ ներկայացվել ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները:

Առանձնացվել են ռիսկի խմբում գտնվող ընտանիքները, որոնք առավել խոցելի են սոցիալ- հոգեբանական խնդիրների առկայության, հաշմանդամության կամ կոնֆլիկտային իրավիճակներից բխող պատճառների առումով, և ըստ դուրս բերված հիմնախնդիրների իրականացվել խորհրդատվություններ՝ ուղղված սոցիալ-հոգեբանական, զբաղվածության և մասնագիտական ուղղորդման նպատակով:

Ծրագրի ղեկավարի և տնօրենի կողմից իրականացվել են այցեր՝ կենտրոնների աշխատանքները և ծրագրի ընթացքը լավագույնս համակարգելու համար:

Բազմամասնագիտական թիմը իրականացրել է հանդիպում-քննարկումներ, սեմինարներ շահառուների ծնողների հետ հետևյալ թեմաների շուրջ՝ Դեռահասության առանձնահատկությունների ներկայացում, դերային խաղի իրականացում, Նպատակների քարտեզ կամ կոլաժաթերապիա, Երեխայի համար նախընտրելի ձևը, միջավայրը տնային տնային աշխատանքի կատարման համար, Երեխայի ինքնագնահատականի և ինքնավստահության զարգացում, Ուսումնական դժվարություններ առաջացնող գործոնները և դրանց հաղթահարման ուղիները:

Կենտրոնում իրականացվել են մի շարք նշանակալի միջոցառումներ, որոնք նվիրված էին «Գիրք նվիրելու օրվան», Կանանց միջազգային օրվան (մարտի 8) և «Միջինք» հայկական ավանդական տոնին:
«Գիրք նվիրելու օրվան» ընդառաջ կենտրոնում կազմակերպվել է ընթերցանության ժամ, որի ընթացքում երեխաները միմյանց գրքեր են նվիրել:
Մարտի 8-ի՝ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ, անցկացվել են բաց դասեր: Երեխաները պատրաստել են բացիկներ և պաստառներ՝ շնորհավորելով մայրիկներին և նրանց նվիրելով իրենց ձեռքով պատրաստված բացիկները:
Մարտի 26-ին կենտրոնում նշվել է նաև «Միջինք» ավանդական տոնը: Տոնի շրջանակում Տեր Հովհաննեսի մասնակցությամբ թխվել է հայկական ավանդական գաթա՝ մետաղադրամով: Քահանան երեխաներին ներկայացրել է տոնի խորհուրդն ու դրա նշանակությունը:
Միջոցառումները նպաստել են մշակութային և ազգային ժառանգության պահպանմանը և դրա ճանաչմանը երեխաների կողմից:

Մատուցվող ծառայությունների որակի բարելավման, ծնողների գոհունակությունը ստուգելու և առաջարկություններ ստանալու նպատակով իրականացվել է անանուն գնահատում:
Անցկացվել է հարցաթերթիկային, անանուն հարցում, որի արդյունքում եռամսյակի ընթացքում ծառայություններ ստացած 70 շահառուների ծնողներ տվել են իրենց կարծիքն ու առաջարկությունները: Հարցման արդյունքները ներկայացված են ստորև:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) ; միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները ; ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Ներկայացված գործողությունները հաշվետու ժամանակահատվածում կատարվել են: Երեխաներին տրամադրվել է մասնագիտական աջակցություն, զուգահեռաբար սոցիալական աշխատողը աշխատանքներ է իրականացրել շահառուների ընտանիքների հետ:
Ծառայությունների որակը բարելավելու նպատակով իրականացվել է անանուն գնահատում, որին մասնակցել են շահառուների ծնողները:
Լրացվել է **70** հարցաթերթ.

Հարցաթերթը պարունակում է **70 լրացված պատասխան**, ներառում է **13 հարց**, որոնցից մի քանիսը՝ փակ, մի քանիսը՝ բաց:

🔎 **Ընդհանուր միտումներ**

- ✓ Երեխաները կենտրոն են հաճախել հաճույքով, բոլոր օրերին և մեծ սպասումով, ինչը վկայում է երեխայի մոտ հաճելի վերաբերմունքի և ներգրավվածության բարձր մակարդակի մասին:
- ✓ Ծնողները գրեթե միաձայն արձանագրել են, որ երեխաների խնդիրները մեղմացել են որոշ դեպքերում հաղթահարվել են:
- ✓ Դիտարկվում է երեխաների վարքի և հաղորդակցության զգալի բարելավում:
- ✓ Ծնողների մեծ մասը մասնակցել է կենտրոնում անցկացվող սեմինարներին:
- ✓ Ծառայությունների գնահատականները եղել են 4 և 5, գերակշռողը՝ «գերազանց»:
- ✓ Սնունդը ծնողների կողմից գնահատվել է որպես առողջարար և երեխայի զարգացմանը նպաստող:
- ✓ Ծնողները գոհ են աջակցության տրամադրման ձևերից, հատկապես՝ երեխաների զարգացմանն ուղղված անհատական մոտեցումներից:
- ✓ Արձագանքների մեջ նաև ակնկալիքներ կան՝ ծառայությունների հաճախակիություն, ծավալների ավելացում, լրացուցիչ ծրագրերի ընդգրկում:

📌 **Եզրափակիչ դիտարկում**

2025 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով՝ Արենիի ցերեկային կենտրոնը ապահովել է որակյալ, կարիքներին համապատասխան և ներառական ծառայություններ այն երեխաների համար, որոնք չունեն հաշմանդամության կարգավիճակ, սակայն ունեն զարգացման կամ վարքային որոշակի դժվարություններ: Ծնողական գնահատականների վերլուծությունը վկայում է, որ երեխաներն առաջընթաց են գրանցել հատկապես հուզական, հաղորդակցական և վարքային դաշտերում:

Երեխաների կողմից կենտրոն հաճախելու ցանկությունը, ինչպես նաև ծնողների ակտիվ ներգրավվածությունն ու բարձր գնահատականները, փաստում են կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքի որակի և վստահության բարձր մակարդակի մասին:

Սննդի կազմակերպումը, մասնագիտական թիմի հասանելիությունը և ծնող-մասնագետ համագործակցությունը դիտարկվել են որպես առանցքային դրական գործոններ: Ծնողների արձագանքներում բացակայում են բողոքներ կամ բարելավման պահանջներ, ինչը ևս մեկ անգամ ընդգծում է ծառայությունների արդյունավետությունը:

1. Ի՞նչ ծառայություններից է օգտվել կամ օգտվում Ձեր երեխան ցերեկային կենտրոնում

70 ответов




2.Ձեր երեխան ունի՞ հաշմանդամության կարգավիճակ

70 ответов



3.Ինչպիսի՞ դժվարություններ ուներ կամ ունի երեխան՝ երբ սկսեց հաճախել կենտրոն

38 ответов




4. Որքա՞ն ժամանակ է երեխան հաճախում ցերեկային կենտրոն

70 ответов




5. Երեխան ինչպե՞ս է հաճախում ցերեկային կենտրոն

70 ответов



6.Ըստ Ձեզ տրամադրված ծառայությունների արդյունքում ինչպիսի՞ արդյունք եք գրանցել

70 ответов




7.Արդյո՞ք Դուք մասնակցել եք ցերեկային կենտրոնի մասնագիտական թիմի կողմից ծնողների համար կազմակերպված սեմինարների/դասընթացների

70 ответов




7.1.Եթե այո, ապա նշել ու՞մ կողմից է անցկացվել սեմինարը

63 ответа



8. Ինչպե՞ս կգնահատեք ծնողների համար անցկացվող սեմինարների որակն ու արդյունավետությունը՝ 1-5 գնահատման սանդղակ... վատ, 2-վատ, 3-բավարար, 4-լավ, 5-գերազանց/

66 ответов




9. Ինչպե՞ս կգնահատեք ծնողներին տրամադրվող մասնագիտական անհատական խորհրդատվության որակն ու արդյունավետությու... վատ, 2-վատ, 3-բավարար, 4-լավ, 5-գերազանց/

70 ответов




10. Երեխան փաստացի ցերեկային կենտրոնում գտնվելու ժամանակահատվածում օգտվու՞մ է կենտրոնի կողմից մատուցվող սննդից

70 ответов



11. Ինչպե՞ս կգնահատեք մատուցվող սննդի որակը

70 ответов




12.Արդյո՞ք բավարարված եք ցերեկային կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների որակից

70 ответов






**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ ; այլն):**

| |
|---|
| https://www.facebook.com/cdfarmenia/posts/pfbid02oPGoR5tn3vYzpp5ozwDozF8jRkYYVVSnDonfTgPNzrapKxg9UhhatVJ3N6TJNCjgl?rdid=2gu8rGAdSiZYZ2FL#<br>https://www.facebook.com/cdfarmenia/posts/pfbid02tCJo6K5Z5ExxnMShFfkoeDFoHCkwQTzQV8qVJhcKoasHphQ5FuY32tvz5spbjTr8l?rdid=xGaYrmddHJuxdRL8# |

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը ;/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում պլանավորված բոլոր գործողությունները իրականացվել են.

Հաշվետու ժամանակահատվածում առընչվել ենք մի շարք մարտահրավերների, որոնցից կարևորներն են.

- Տրամադրվող ֆինանսական միջոցների սահմանափակ լինելը խոչընդոտում է որոշ միջոցառումների իրականացմանը և անհրաժեշտ նորարարությունների ներդրմանը:

- որոշ ծնողներ, ովքեր ունեն հաշմանդամության կարգավիճակ ունեցող երեխաներ, թաքցնում են երեխայի հաշմանդամ լինելու փաստը: Այս պատճառը ստեղծում է խնդիր՝ ապահովելու համապատասխան աջակցության մատուցումը, ինչն էլ ազդում է աջակցության կազմակերպման և կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության վրա:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Ծառայություններում կնդգրկվեն նոր շահառուներ ընդլայնելով ծառայությունների շրջանակը:

Կկատարվեն հետագա աշխատանքները խթանող քայլեր՝ ծնողների հետ համագործակցության խորացման և սոցիալ-հոգեբանական աջակցման միջոցառումների իրականացման համար:

Մասնագետները համապատասխանաբար կիրականացնեն աշխատանքներ ծնողների հետ՝ լավագույնս ապահովելու շահառուի զարգացման և հասարակության մեջ լիարժեք ներառման գործընթացը:
Բազմամասնագիտական թիմը կիրականացնի երեխաների իրավունքների, ծնողավարության հմտությունների և այլ կարևոր թեմաների վերաբերյալ դասընթացներ, ինչպես նաև կտրամադրի մասնագիտական անհատական խորհրդատվություն՝ ուղղված ԿԴԻԳ երեխաների՝ ընտանիքում ապրելու, զարգանալու, կրթություն ստանալու և հասակակիցների շրջանում նրանց լիարժեք ներառվելուն:

Անհատական սոցիալական ծրագրերը կենթարկվեն մշտադիտարկման՝ սահմանված գործողությունների և ժամկետների համաձայն:
Կիրականացվի կարիքների գնահատում՝ յուրաքանչյուր կիսամյակ մեկ անգամ, իսկ առավել կարճ ժամանակահատվածով հաճախումների դեպքում՝ ծրագրի ներառման սկզբում և վերջում՝ ապահովելու գնահատման և մոնիթորինգի անհատական մոտեցում:

Մատուցվող ծառայությունների որակը գնահատելու և առաջարկություններ ստանալու նպատակով, եռամսյակի ընթացքում կիրականացվի անանուն գնահատում շահառուների շրջանում:
ՄԶՀ սուպերվիզորները պարբերաբար կկատարեն այցեր՝ ծանոթանալու կենտրոնների մասնագետների աշխատանքի ընթացքին և տրամադրելու անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

| |
|---|
| Իրականացվել են Հիմնադրամի անձնակազմի կարողությունների զարգացմանը նվիրված հնգօրյա դասընթացներ՝ ուղղված հուզական ինտելեկտի, քննադատական մտածողության և արհեստական բանականության կիրառման հմտությունների զարգացմանը:<br>Դասընթացի ընթացքում մասնակիցները ձեռք բերեցին նոր գիտելիքներ ու գործնական հմտություններ, որոնք կօգնեն նրանց արդյունավետորեն կատարել աշխատանքը և կիրառել նորարարական լուծումներ մասնագիտական գործունեության մեջ:<br>Երեխաների հետ աշխատող մասնագետների համար, դասընթացը կարևոր էր, քանի որ այն հնարավորություն ընձեռեց պահպանել ու զարգացնել հուզական ինտելեկտը՝ տիրապետել ճիշտ հուզական հաղորդակցման հմտություններին և ինքնակարգավորման գործիքակազմին: |

Տնօրեն՝ Լուսինե Սիմոնյան

SIMONYAN LUSINE 7802750164

Digitally signed by SIMONYAN LUSINE 7802750164
Date: 2025.04.09 13:39:54 AMT




Մանկական զարգացման հիմնադրամ